ՏԵՂԵԿԱՆՔ

«ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հոդված 9. Ջրային ռեսուրսների գնահատումը

Ջրային ռեսուրսների գնահատումն իրականացվում է ջրային ռեսուրսի որակի, քանակի, ձևի ~~և բաշխվածության~~ , բաշխվածության և ըստ ջրային մարմինների կարգավիճակների ամբողջական գույքագրմամբ՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի և դրանից բխող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Ջրային ռեսուրսների վերագնահատումն իրականացվում է պարբերաբար՝ առնվազն ~~5~~ 6տարին մեկ:

Ջրային ռեսուրսների ամբողջական կամ մասնակի գնահատումը կարող է իրականացվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համապատասխանաբար ջրօգտագործողի պահանջով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Ջրային ռեսուրսների գնահատման մեխանիզմները սահմանված կարգով սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 13. Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության գերակայությունները

~~1. Ջրային ռեսուրսների պահպանության և կայուն կառավարման նպատակով ընդհանուր առաջարկի պահանջարկի գնահատումից ստացված արդյունքների հիման վրա ջրային ռեսուրսների բաշխումը ջրօգտագործողների միջև ըստ առաջնահերթության իրականացվում է հետևյալ գերակա ուղղություններով՝ ըստ հերթականության.~~

~~1) ազգային ջրային պաշար՝ բնակչության հիմնական կարիքները բավարարելու, ջրի անբավարարության հետևանքով հիվանդությունները նվազեցնելու ու կանխարգելելու և ջրային էկոհամակարգերը պահպանելու համար անհրաժեշտ քանակի և որակի վերականգնվող ջրային ռեսուրսների պահպանում և օգտագործում.~~

~~2) ավանդական՝ ջրահոսքի հունի սահմաններում պատմական, ոչ արդյունահանման նպատակով ջրերի օգտագործում.~~

~~3) ջրային ռեսուրսների օգտագործում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային պայմանագրերի համաձայն.~~

~~4) կենցաղային՝ մարդկանց կուլտուր-կենցաղային ջրապահանջի կարիքները բավարարելու համար ջրօգտագործում.~~

~~5) գյուղատնտեսական՝ ոռոգման, արոտավայրերի ջրարբիացման, անասնապահության և այլ ոչ արդյունաբերական ջրապահանջի կարիքները բավարարելու համար.~~

~~6) էներգետիկ՝ էներգիայի արտադրության ջրապահանջի կարիքները բավարարելու համար.~~

~~7) արդյունաբերական՝ ջուր արտադրական գործընթացներում.~~

~~8) ռեկրեացիոն օգտագործում՝ ջուր մարզական, սիրողական ձկնորսության, լողի, նավարկության և գեղագիտական վայելքի համար.~~

~~9) հակաերաշտային միջոցառումներ՝ երաշտներից վնասները նվազագույնի հասցնելու համար։~~

1. Ջրային ռեսուրսների պահպանության և կայուն կառավարման նպատակով ընդհանուր առաջարկի պահանջարկի գնահատումից ստացված արդյունքների հիման վրա ջրային ռեսուրսների բաշխումը ջրօգտագործողների միջև ըստ առաջնահերթության իրականացվում է հետևյալ գերակա ուղղություններով՝ ըստ հերթականության.

1) ազգային ջրային պաշար՝ բնակչության հիմնական կարիքները բավարարելու, ջրի անբավարարության հետևանքով հիվանդությունները նվազեցնելու ու կանխարգելելու և ջրային էկոհամակարգերը պահպանելու համար անհրաժեշտ բանակի և որակի վերականգնվող ջրային ռեսուրսների պահպանում.

2) ռազմավարական ջրային պաշար՝ արտակարգ իրավիճակների պայմաններում (երաշտ, էկոլոգիական աղետներ, էներգետիկ ճգնաժամ և այլն) մարդկանց հիմնական կարիքների բավարարման և ջրային էկոհամակարգերի պահպանման ապահովման համար ջրային ռեսուրսների պահպանում և օգտագործում.

3) ավանդական՝ ջրահոսքի հունի սահմաններում պատմական, ոչ արդյունահանման նպատակով ջրերի օգտագործում.

4) ջրային ռեսուրսների օգտագործում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային պայմանագրերի համաձայն.

5) կենցաղային՝ մարդկանց կուլտուր-կենցաղային ջրապահանջի կարիքները բավարարելու համար ջրօգտագործում.

6) գյուղատնտեսական՝ ոռոգման, արոտավայրերի ջրարբիացման, անասնապահության և այլ ոչ արդյունաբերական ջրապահանջի կարիքները բավարարելու համար.

7) էներգետիկ՝ էներգիայի արտադրության ջրապահանջի կարիքները բավարարելու համար.

8) արդյունաբերական՝ ջուր արտադրական գործընթացներում.

9) ձկնաբուծական նպատակով ջրօգտագործում.

10) ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործում՝ ջուր մարզական, սիրողական ձկնորսության, լողի, նավարկության և գեղագիտական վայելքի համար.

հակաերաշտային միջոցառումներ՝ երաշտներից վնասները նվազագույնի հասցնելու համար:»

2. Ջրերի բաշխում չի կարող տեղի ունենալ, եթե այն վնաս է հասցնում ազգային ջրային պաշարին:

Հոդված 14. Արտակարգ իրավիճակների հետ կապված առանձնահատկությունները

1. Ջրային ռեսուրսների մատչելիության հետ կապված արտակարգ իրավիճակներում ջրային ռեսուրսների օգտագործման սահմանափակումն իրականացվում է սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի ~~4-9-րդ կետերով~~ 5-11-րդ կետերով սահմանված՝ ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության գերակայությունների փոփոխությամբ՝ հակառակ հերթականությամբ:

2. Ջրային ռեսուրսների քանակի և (կամ) որակի փոփոխության հետ կապված արտակարգ իրավիճակների դեպքում ջրօգտագործողներին ավելի ցածր, բայց դեռևս պիտանի որակի ջրային ռեսուրսներ են ապահովում այլընտրանքային աղբյուրներից: